Պարույր Սևակ

Տան երազը

Ես աչքերըս փակում ու տեսնում եմ հստակ՝
Մեր երազանքն արդեն կերպարանք է առել.
Խանդոտ բարդիների արթուն հսկումի տակ
Սարավանդի վրա մեր տնակն է թառել:
Աղյուսից է շինված, միայն հիմքն է քարից,
Կտրին կանաչ խոտեր՝ հողածածկ է վերից.
Պատերն ազնըվորեն այնպես շիտակ,
Սովորական փայտե ներկված հատակ.
Ո՛չ շատրվան ցայտող, ո՛չ ավազան մարմար,
Ո՛չ կամարներ շքեղ ու պայտաձև:
Խոյակավոր սյունե՞ր: Սակայն ինչի՞ համար,
Եթե պատշգամբ կա մի պայտաձև,
Որ լուռ գոգ է տվել սաղարթի տակ,
Եթե, երակի պես, շենքի ճակատն ի վեր
Տարածվել է, փռվել մի պատատուկ,
Ու դեղձին է տվել կանաչ շիվեր...
Իսկ տան չորս կողմ՝ այգի, միշտ էլ ցողոտ-շաղոտ,
Ածուների թմբով շրջանակված մարգեր,
Շրջանակված՝ ինչպես մի նոր սրբապատկեր,
Որ կարիք էլ չունի ու չի կորզում աղոթք,-
Քո հպումն են նրանք լոկ փափագում,

Քո հպումը, անգի՛ն:
Եվ դու հաճախ,
Երբ արևը նոր է սարից ծագում,
Բրդե շալը ուսիդ, ոտքիդ մուճակ,
Տարածելով չորս կողմ մի հողաբույր ժպիտ,
Այցելում ես սիրով ամեն թփի.
Մոտենում ես զգույշ,
Անհունորեն քնքուշ
Ձեռք ես տալիս, կարծես բարևում ես հերթով.
Կոր ցողունին մեկի՝ խաչափայտ ես տնկում,
Հիանում ես մեկի փարթամ ծաղկաթերթով,
Մեկի արմատները փխրում բրչով փայտի,
Իսկ այն մեկի մասին - հասունության առթիվ -
Շոյիչ մի խոսք ասում...
Այգու մյուս մասում
Ձեռքիս արծաթ բահով այսօր նորից
Հորդ անձրևի բերած տիղմ ու քարից
Այն առուն եմ մաքրում, որ մանկաբար
Վախենալով դիպչել հանկարծ պատին՝
Սիրով ընկերանում ցանկապատին
Ու բակ է ներս խուժում ափալ-թափալ...
Բակ եմ մտնում ես էլ:
Այգու ցողով շաղված,
Փոքր-ինչ հոգնած արդեն՝ բազկաթոռում թաղված,
Տանու շորրդ հագած, ոտքիդ մաշիկ՝
Դու սպասում ես ինձ... նախաճաշի...
*
Դու հարցնում ես հաճախ.
«Ո՞նց ես տանում,
Անգո՛ւթ, ո՞նց ես ապրում ինձնից բաժան,

Ո՞նց է, որ ինձ նման չես խենթանում,
Ո՞նց է, որ չես զժվում անլուր տառապանքից»:
Մի մոռացիր, որ իմ և քո կյանքում դաժան
Եվ երազ կա,- այսպե՛ս,- բացի անհույս կյանքից...

22.VIII.1948թ.
Երևան